ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
2021, № 1, 44-54 *Լեզվաբանություն*
https://doi.org/10.46991/BYSU:B/2021.12.1.044

«ԱՉՔ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՇՏԸ

ԱՆԱՀԻՏ ԱԴԻԼԽԱՆՅԱՆ

Իմաստաբանական դաշտը լեզվական միավորների ամբողջությունն է, որում բառերը միավորված են ըստ իրենց արտահայտած իմաստի կամ գործառույթի: Լեզվաբանության մեջ դեռևս միասնական մոտեցում չկա բառերի թեմատիկ խմբերի կամ իմաստաբանական դաշտի վերաբերյալ, բայց մի հարցում միակարծիք են. իմաստաբանական դաշտը ներառում է այն բառամիավորները, որոնք միացած են իմաստային կապերով և համախմբված են նույն իմաստն արտահայտող կամ դրանց միավորող հասկացության՝ միջուկի շուրջ: «Դաշտի միջուկն այն է, որին ձգտում են իմաստային հարաբերությամբ կապված մյուս անդամները»[1]:

Իմաստաբանական դաշտի խնդիրների ուսումնասիրությունը չի վրիպել ժամանակակից բառագետների ուշադրությունից: Այդ հարցն ունի ճանաչողական նշանակություն. այն կապվում է մարդու գործունեության, աշխարհընկալման հետ և բնականաբար առնչվում է գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, էթիկետի խնդիրներին, ինչպես նաև 20-րդ դարում ազգերի էթնիկական, ազգային ինքնագնահատանքի արժևորմանը, հաղորդակցական նորմերի ձևավորմանը: Ժամանակակից լեզվաբանները ընդարձակել են իմաստաբանական դաշտը՝ որպես լեզվական իրողություն: Դրա հետ է կապվում բառագիտության այս բաժնի՝ իմաստաբանության ուսումնասիրությունը, որն առանձնապես դրսևորվում է բառապաշարի զգացմունքային-արտահայտչական ոլորտում:

Իմաստային դաշտի ուսումնասիրության գաղափարը պատկանում է գերմանացի լեզվաբան Տրիրին, սակայն «իմաստային դաշտ» եզրույթը առաջին անգամ կիրառել է Իպսենը[2]: Գերմանացի լեզվաբան Տրիրը առանձնացնում է «դաշտ» հասկացությունը՝ այն վերագրելով բառապաշարին: Ըստ նրա՝ «լեզուն փակ համակարգ է, որտեղ ամեն բառ իր իմաստը ստանում է ընդհանուրի մեջ՝ հարաբերվելով մյուս

[1] **Шафиков С**. Теория семантического поля и компонентной семантики его единиц, М., 1999, с. 21.

[2] Տե՛ս **Кадыров Г. Р**. Теоретические подходы к понятию „поля„ в лингвистике. https://applied-resear ch,ru/ru /article/wien.id=6307

բառերի հետ»[3]: «Իմաստային դաշտի» վերաբերյալ Տրիրի և Պորցիգի տեսակետներին անդրադարձել է նաև ակադ. Գ. Ջահուկյանը. «Եթե Տրիրը ուսումնասիրում էր անունները, ապա Պորցիգը խոսում է և բայերի մասին, «իմաստային դաշտի» կենտրոնը համարում բայը…»[4]:

Իմաստաբանական դաշտ հասկացության սահմանները աստիճանաբար ընդլայնվում են՝ ներառելով ոչ միայն բառագիտության բաժինը, այլ նաև քերականական համակարգը՝ ձևաբանական և շարահյուսական իմաստաբանական դաշտերը: Այսինքն՝ իմաստաբանական դաշտը լեզվական միջոցների այն ամբողջությունն է, որի մեջ մտնում են միմյանց հետ որոշակի իմաստային հարաբերություններ արտահայտող լեզվական միավորները: Այս առիթով արտահայտվել է ռուս լեզվաբան Կարաուլովը. ««Բառիմաստային դաշտ» հասկացությունը բավական ընդարձակ է, քանի որ այստեղ բախվում ենք մի քանի խնդիրների՝ հոմանիշներ, հականիշներ, բառերի արտահայտած իմաստներ և արտահայտման ձևեր»[5]: Այստեղից հետևություն, որ բառերի արտահայտած նշանակությունների վրա հիմնված բառային խմբերը ունեն մեկ ընդհանուր իմաստային ցուցիչ, որը և իր շուրջն է միավորում բառային մյուս խմբերը: Բառարաններում նշվում են ոչ միայն բառի լեզվական առանձնահատկությունները՝ իմաստը, բովանդակությունը, այլ նաև դրանց ոչ լեզվական պայմանները, որոնք կանխորոշում են բառերի արտահայտած իմաստները և գործածությունը: Սա նշանակում է, որ բառերը մեկուսի չեն կարող գոյություն ունենալ, քանի որ բառապաշարի մեջ դրանք փոխկապակցված են: Բառային միավորները բաժանվում են խմբերի՝ ըստ որոշակի հատկանիշների, որոնք մատնանշում են տարաբնույթ իմաստային հարաբերություններ: Հայերենի բառապաշարի մեջ կան բառեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքային միավորներ, որոնք տեղեկույթ են հաղորդում ազգի լեզվի, մշակույթի, ավանդույթների մասին, այսինքն՝ մշակութահեն բառեր են:

«Աչք» հասկացույթի իմաստային դաշտի մեջ միավորված են լեզվական այն միջոցները, որոնք «աչք» բառույթի[6] հետ իմաստային զանազան հարաբերություններ են արտահայտում: Բացահայտվում են նրանց միջև գոյություն ունեցող տարաբնույթ իմաստային կապերը: Դրանք միավորված են նաև տարբեր գործառույթներով՝ արտահայտելով հուզաարտահայտչական զանազան նրբերանգներ:

«Աչք» բառույթը ունի արտահայտման և բովանդակային բնույթ. բովանդակային բնույթը բնորոշում է լեզվական միջոցների ընդհանրական իմաստը, իսկ արտահայտման ձևերը բազմազան են՝ տարբեր ի-

---

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] **Գ. Բ. Ջահուկյան**, Լեզվաբանության պատմություն, Եր., 1962, էջ 357:

[5] **Караулов Ю**. Структура лексико-семантического поля , Филологические науки, 1972, М., Т.1., с. 57-68.

[6] Տե՛ս **Ալ. Մարգարյան**, ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 23:

րենց արտահայտման բառամիավորներով:

Հոդվածի համար նյութեր քաղվել են բացատրական բառարաններից, դարձվածաբանական բառարաններից, գեղարվեստական գրականությունից, լեզվաբանական աշխատանքներից՝ հայերեն և ռուսերեն: Մեզ հետաքրքրել է թե «աչք» հասկացույթը ինչ ընկալում ունի մեր ազգի լեզվամշակութակիրների գիտակցության մեջ: Մեր նպատակն է եղել կատարել «աչք» հասկացույթի իմաստաբանական, բառակապակցական, գործառույթային հատկանիշների վերլուծություն, ինչպես նաև բացահայտել՝

«աչք» հասկացույթի իմաստային դաշտի կառուցվածքը: Լեզվական ամբողջ պատկերը բացահայտվում է «աչք» բառույթի իմաստային դաշտի կառուցվածքում,

«աչք» բառույթի՝ բառարաններում արձանագրված իմաստները,

«աչք» բառույթով կազմված դարձվածային միավորները, մեր մշակույթով և ավանդույթներով պայմանավորված բնորոշ իմաստները,

«աչք» բառույթի փոխաբերական իմաստը,

«աչք»-ը որպես ոչ խոսքային հաղորդակցման միջոց:

Հայերենում, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տվել, «աչք» բառույթը, բացի իր հիմնական իմաստից՝ մարդու մարմնի մաս՝ տեսողության գործարան, ձեռք է բերել նաև փոխաբերական իմաստներ: Այս առումով առաջնորդվել ենք Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» արձանագրված տեղեկությունով: Բառարանում նշվում են 17 իմաստներ՝ ուղիղ ու փոխաբերական, և դարձվածքային միավորներ[7], բայց դասակարգումը կատարվել է ըստ իմաստային հետևյալ հատկանիշների.

1. Աչք – տեսողական օրգան՝ որպես բժշկական տերմին:

2. Տեսողություն, տեսնելու ունակություն:

3. Հայացք, նայվածք:

4. Առարկաների տեղը, մատանու աչքը, կահույքի աչք՝ դարակ, աղբյուրի ակը՝ աչքը:

5. Բույսերի, ծառերի բողբոջը՝ աչքը:

6. Հսկողություն, խնամք, բարեհաճություն, մարդկային հատկանիշներ արտահայտող բառաձևեր:

7. «Աչք» բառույթի փոխաբերական իմաստը:

8. «Աչք»-ը որպես ոչ խոսքային հաղորդակցական միջոց:

(Անդրադարձել ենք նաև «աչք»-ի դերին՝ որպես դիմախաղի, հայացքի դրսևորման միջոցի):

Իմաստային այս խմբերի միջև գոյություն ունեն տարաբնույթ իմաստային կապեր, որոնք ակտիվ և պասիվ գործառույթներով կապվում են «աչք» հասկացույթի հետ և կազմում իմաստային դաշտ:

---

[7] Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 93:

«Աչքի» հետևյալ նշանակությունները արտահայտված են գծագրում, որն ամբողջացնում է «աչք» հասկացույթի կառուցվածքը. երևում է, որ «աչք» բառույթը իմաստային դաշտի միջուկն է, որի շուրջը իմաստային տարբեր նշանակություններով առանձնանում են ենթախմբերը:



Աչքը որպես տեսողության օրգան, տեսողություն, աչքի վիճակ (ուղիղ նշանակություն)

1. Աչք – ակն բառը բժշկության մեջ տերմինի արժեք ունի, և հետևապես այս բառույթով բաղադրված բառերը ևս տերմինի արժեք են ստանում և արտահայտում նրա ուղիղ իմաստը՝ ակնաբիբ, ակնաբյուրեղ (ոսպնյակ), ակնաբուժարան, ակնաբուժություն, ակնաբույժ, ակնաբույն-ակնախոռոչ-ակնափոս, ակնագունդ՝ աչքի գունդը՝ խնձորը-ակնախնձոր, ակնաթաղանթ՝ աչքի թաղանթը, աչքատակ՝ աչքի ներքևի փոսը, ակնաշարժիչ՝ աչքի շարժումները ղեկավարող նյարդ:

2. Տեսողության, տեսնելու ունակության հատկանիշը արտահայտված է դարձվածքների միջոցով[8]՝ աչքերը բռնվել, աչքերը մթնել, աչքերի առաջ սևանալ, աչքը սուր, աչքերի լույսից զրկվել, աչքը խավարել, աչքի լույս, աչքի լույսը խավարել, աչքից խեղճ:

3. Հայացք, նայվածք: Բառաձևեր և դարձվածքային միավորներ, որոնք արտահայտում են նաև շարժում (այս մասին մանրամասն կանդրադառնանք ոչ խոսքային միջոցների մեջ):

Ակնապիշ-ակնասևեռ-ակնդետ, ակնաքթիթ-աչքերը կկոցած, սևեռուն (հոմ.), ակնկոր-աչքերը խոնարհած: Կան շարժման իմաստ արտահայտող դարձվածքներ՝ աչք ածել-չորս կողմը նայել, աչքերը պլշել-լարված նայել, աչքերին ազատություն տալ-անարգել նայել, աչքը չռել-

[8] Տե՛ս **Պ. Բեղիրյան**, Հայերենի դարձվածքների ընդարձակ բառարան, Եր., 2011, **Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, **Խ. Բաղիկյան**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 2002:

աչքը պահել (հոմ.)-հայացքը սևեռել, աչքին (աչքով) ընկնել-նկատվել, աչք գցել-նայել, հայացք նետել, աչքերով ուտել-լափել-խժռել (հոմ.)-անմաքուր հայացքով նայել, աչք տնկել (մեկի վրա)-ուշադիր, կենտրոնացած նայել, աչքի տակով-տակից նայել-զննել, հետևել, ծածուկ նայել, աչքից չվրիպել- նկատել, ուշադրություն դարձնել:

4. Առարկաների տեղը, մատանու աչքը, անկյունը՝ կահույքի դարակ, աղբյուրի ակը՝ աչքը, մատնացույց անող բառեր (անվանողական նշանակություն): Ակնատեղ՝ ակի՝ թանկագին քարի տեղը, ակնատուփ-ակնեղենի տուփը, ակնաշատ (աղբյուրի աչք)-շատ ակունքներ՝ աղբյուրներ ունեցող, ակնավճիտ-վճիտ, մաքուր ակունք ունեցող, ակնաղբյուր-ակունքից բխող աղբյուր:

5. Բույսերի, ծառերի բողբոջը՝ աչքը: Աչքապատվաստ, ակնավորել՝ բողբոջներ արձակել: Օրինակ՝ «Էտի ժամանակն է. ծառերն արդեն ակնավորել են» (ՍՋ):

6. Հսկողություն, խնամք, բարեհաճություն, մարդկային հատկանիշներ արտահայտող բառաձևեր և դարձվածքներ: «Աչք» բառույթով կազմված բառաշարքերը և դարձվածքային միավորները, որոնք իմաստաբանական դաշտի մեջ են մտնում, կապվում են նաև մարդկային զգացական ապրումների, ինչպես նաև ազգային մշակույթի և ավանդույթների հետ: Աչքաբաց-բանիմաց, աչքաթող-անտեսված, աչքածակ-անկուշտ, ագահ, ակնածել-պատկառել, հարգել, ակնառել-չար աչքի գալ: Ակնհայտ է, որ սրանք առավելապես դարձվածքներ են՝ աչք առնել-չար աչքի գալ, աչք դնել-հավանել, սեր տածել, աչքերը արյունը կոխել-զայրանալ, գազազել, աչքերը արտասուքով լցվել-լաց լինել, լալ, աչքերը բացվել-աչքերի կապն արձակվել (հոմ.)-այլևս միամիտ չլինել, հասկանալ, աչքերը ետևից մնալ-կարոտով երկար նայել մեկի, աչքերը/ին թոզ փչել-խաբել, աչքերը կախել-ամաչել, աչք/երը շոյել-հաճելի, դուրեկան, աչքերը պաղ-սառը աչքեր, դատարկ աչքեր, մերկ աչքեր-անտարբեր, աչքը բան գցել-կաշառել, աչքը բաց լուսացնել-ամբողջ գիշեր չքնել, աչքը դռանը մնալ-մեկի գալուն սպասել, աչքը դուրսը-ամուսնական կյանքին անհավատարիմ, աչքը լի-կուշտ, գոհ, աչքը ծանր-չար աչք ունեցող, աչքը շոռ-ցանկասեր, աչքը վախենալ-մի բանից զգուշանալ, աչքի ծայրով-աննկատելի, գաղտագողի, աչքին բարձրանալ-բարձր կարծիք կազմել, աչքի վրա տեղ ունենալ-սիրով, հաճույքով, աչք-ունքը թթվեցնել-դեմքը խոժոռել, աչքերը բաց պահել-ծոծրակին աչքեր ունենալ (հոմ.)-զգաստ, շրջահայաց լինել, աչքերը ջուր կտրել-սպասել:

7. «Աչք» բառույթի փոխաբերական իմաստը:

Այն դրսևորվում է բառագործածության մեջ, մյուս բառերի հետ ունեցած փոխկապվածության մեջ: Այսպես՝ «Արմենակ Եկարյանը ծակող աչքերով …մոտեցավ Արամին» (ԳՄ): «Բարձր գնահատեց Ջևդեդ փաշան Փոլադ բեյի մաքուր և մտածված աշխատանքը և նրան նշանակեց

բարձր զինվորական հրահանգիչ, իր աչքն ու ականջը, իր աջ ձեռքը» (ԳՄ):

«…բայց իրեն դուր չի եկել նրա՝ առողջ կնոջ քաղցած աչքերը, որոնցով նա նայել է իրեն…» (ԳՄ):

«Արամի մայրն էլ է եկել ու նստել վերջին շարքում. հայացքով տղային է փնտրում, գտավ ու այլևս նրա հետ է աչքերով, մտքով» (ԳԲ):

8. «Աչք»-ը (նաև դարձվածքի բաղադրիչ) որպես ոչ խոսքային հաղորդակցական միջոց: «Աչք»-ը՝ որպես հայացքի, նայվածքի դրևորման ձև, իր արտահայտությունն է գտել ոչ խոսքային միջոցների մեջ: Հայտնի է, որ հաղորդակցական տարբեր իրավիճակներում աչքերով արտահայտված դիմախաղը մեծ նշանակություն ունի հայերիս համար: Դիմախաղը, անշուշտ, ունի անհատական բնույթ և ազդում է մարդկանց միջև շփման վրա: Այն բնորոշում է մարդու զգացական դաշտը, խառնվածքը նն: Հետևապես, տեղեկատվության հաղորդումը իրականացվում է ոչ միայն լեզվական միջոցներով՝ խոսքի միջոցով, այլև ոչ խոսքային միջոցներով, առավելապես դիմախաղով: Հաղորդակցման ընթացքում մեծ դեր են խաղում աչքերը՝ կախված հաղորդակցական իրավիճակից: Աչքերի «խաղը»՝ թարթելը, հայացքը՝ ուշադիր, անտարբեր, զարմացած, ուսումնասիրող նն, հաղորդում են անսահմանափակ տեղեկույթ, որի շնորհիվ մարդկանց միջև փոխըմբռնման հարաբերություն է հաստատվում: Տեսողական հաղորդակցում տեղի է ունենում հայացքի միջոցով՝ սկսել խոսակցությունը, խոսակցությունը ավարտելու նշան, հրաժեշտի կամ համաձայնության նշան նն: Եվ այդ ամենը ուղեկցվում է աչքերի շարժերի միջոցով: Առանձնապես երկխոսությունների ժամանակ է ընդգծվում աչքերի դերը: Իզուր չէ, որ ասում են՝ «աչքերը հոգու հայելին են»: Այսպիսի օրինակ կինոյից. «Քո խոսքերին չեմ հավատում, որովհետև աչքերդ ուրիշ բան են ասում»: Հայացքը կարող է կազմել ենթադաշտ, քանի որ աչքերի շարժի շնորհիվ են առանձնանում հայացքների տեսակները:

Իր առանձնահատկությամբ հայացքը կարող է լինել՝ ա. գործնական (այդ հայացքը բնորոշ է պաշտոնական խոսքային իրադրությանը), երբ հայացքը կենտրոնացած է զրուցակցի ճակատին կամ հոնքերի մեջտեղին: Եթե գործնական զրույցի ժամանակ խոսակիցը հետաքրքրված է, ապա ժամանակ առ ժամանակ կարող են հայացքներ փոխանակել, բ. աշխարհիկ (ոչ պաշտոնական խոսքային իրադրություն), եթե հայացքը իջնում է աչքերից ներքև՝ մինչև շուրթերը. դա ստեղծում է հաղորդակցման անկաշկանդ միջավայր, գ. ինտիմ, եթե հայացքը ուղղված է դեմքից ներքև՝ մարմնի տարբեր մասերին[9]:

Յուրաքանչյուր մարդ կարող է հայտնվել հուզական տարբեր իրավիճակներում, և դրանից կախված՝ աչքերը դառնում են զգացմունքնե-

[9] Տե՛ս Studfile.net/preview/4430985/page:3

րի արտահայտման միջոց: Դրանք խոսքին լրացուցիչ տեղեկույթ են հաղորդում, բացահայտում նույնիսկ խոսակցի գաղտնի մտքերը: Անդրադառնանք հայացքների տեսակներին՝ համառ, ուշադիր, երկար, սառը, գնահատողական, արհամարհական, ծանր, վազող, կարճ, զարմացական, վերջին, ուսումնասիրող, թափառող, հարցական...



Պայմանավորված հաղորդակցական իրադրությամբ՝ հայացքները տարբեր բնույթի են, այսպես օրինակ՝ լայն բացված աչքեր-զարմանքի արտահայտման միջոց, կկոցած աչքեր-վկայում է այն մասին, որ խոսակիցը հակված է ոչինչ բաց չթողնել, կողմնորոշվել բարդ իրավիճակներում, բութ հայացք-անտարբերություն, իրեն ոչինչ չի հետաքրքրում, համառ հայացք-ճնշում դիմացինի վրա: Օրինակ՝ «Օհանես աղան ուղիղ նայեց այդ լրբենու աչքերին, եթե ձեռքին ձեռնափայտ ունենար, անկասկած կիջներ հենց գլխին» (ԳՄ): Ինչպես նաև վկայում է դիմացինի մեծամտության, իշխելու, ատելության մասին, հայացք՝ ուղղված ներքև-համեստություն, ամոթի զգացումի մասին է վկայում, խոսքի ընթացքում փակ աչքեր-մարդը փակվում է ինքն իր մեջ կամ զրույցը հե-

տաքրքիր չէ, մի աչքի փակելը-բացելը – հասկացնել: Այսպես՝ «Օհանես աղան և Սիմոն աղան նայում են իրար և ժպտում, ապա թե Սիմոն աղան չարաճճի թեթևությամբ աչքով է անում Օհանես աղային» (ԳՄ): Աչքերը փակել-չտեսնել՝ «Արամը փակեց աչքերը՝ չտեսնելու համար, ուզեց փակել ականջները՝ չլսելու համար» (ԳՄ) ևն: Հայացքները կարող են ունենալ անհատական բնույթ, ինչպես օրինակ՝ տղամարդու, կնոջ, ամուսնու, եղբոր, մոր, քրոջ, ընկերոջ-ընկերուհու և այլն: Այսպես՝ «…ապա վավաշոտ աչքերը տնկելով դեպի կանայք, որ հեռուն կանգնած նայում էին» (ԴԴ): «Ուշադրություն գրավելու նպատակով աչքերը սիրում էր խաղացնել» (աչքերով կոկետություն անել):

Որպես հայացքի դրսևորման ձևեր և դրանց ընկալման առանձնահատկություններ հարկ է անդրադառնալ շարժում արտահայտող հոմանշային դարձվածքներին.

Աչքերը բներից դուրս թռչել- դուրս պրծնել:

Աչքերը լայնանալ-լայնացնել-լայն բանալ:

Աչքերը կլորանալ-կլորացնել:

Աչքերը չռել-չռվել:

Աչքերը պլշել-պլշացնել:

Աչքերը մեծանալ-խոշորացնել:

Աչքերը ճոթռել-ճթռել:

Աչքը մտցնել-աչքը խոթել-աչքը կոխել-տեսանելի դարձնել:

Օրինակ՝ «Մի-մի բաժակ սուրճ վայելելուց հետո նրանց առաջնորդում էր դասեր լսելու, հյուրերի աչքն էր խոթում հատկապես թուրքաց լեզվի դասավանդման բարձր մակարդակը» (ԳՄ):

Այս դարձվածքները թեև հոմանիշներ են, բայց արտահայտում են տարբեր հոգեվիճակներ[10]:

Ա. Վախենալ, սարսափել

«Դու վախեցած ես, այո՛, այո՛, ուղղակի սոսկումից լայն-լայն բացված աչքերով նայեցիր ինձ» (Ն-Դ):

Բ. Բարկանալ, զայրանալ, կատաղել

«Ռուբենը զայրույթից ուղղակի կարմրեց. չռված աչքերը ակնոցի ապակու տակ կրկնակի մեծ երևացին» (ԷԱ):

Գ. Ապշել, անակնկալի գալ, զարմանալ

«Նոր միայն հիշեց Շուշանիկին, որը սենյակի մեջտեղում կանգնած, աչքերը լայն-լայն բացած լսում էր» (Շ):

«Մարդը խոշոր-խոշոր բացել էր աչքերը՝ տեսածին չուզենալով հավատալ» (Եր.):

«Կանգ առավ՝ ապշանքից լայն բացված աչքերով» (Ն-Դ):

Աչքերը բնում շուռ գալ-աչքերը բներում խաղալ-աչքերը ակնակապիճներում ոլորվել, աչքերը ակնախոռոչներում, բներում խաղացնել,

[10] Տե՛ս **Երջ. Գևորգյան**, Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 47-67:

աչքերը խոժոռել, աչքերը խոլորել-խոլորտել

Ա. Սաստել, սպառնալ

«Երեմիան աչքերը խոլորեց կնոջ վրա: Կինը լռեց» (ՎԹ):

Բ. Բարկանալ, զայրանալ

«Մեծ եղբայրը աչքերը ոլորում է, սպառնալից նայում նրան» (ԱԲ):

Աչքերը գետին խոնարհել, աչքերը գետին կախել, աչքերը գետին գցել, աչքերը գետին հառել

Ամաչել, մեղավոր զգալ

«… հարցերին աղջիկը պատասխանում էր՝ աչքերը գետին խոնարհած: Պարզ տեսնում եմ՝ ամաչում է» (ՍԶ):

Աչքերը փակ/ել, աչքերը գոց/ել, աչքերը խուփ/ել

Ա. Ներանձնանալ

«Վարժապետը աչքերը գոց, կծկված իր հոգու մեջ, խորհում էր» (ԱԻ):

Բ. Համաձայնել, դրական պատասխան տալ

«Վարդապետը գլուխը շարժելով գոցեց ու բացեց աչքերը՝ իբր հասկացավ ու շարունակեց իր աղոթքը» (Ր):

Աչքերը դեպի վեր ուղղել, աչքերը բարձրացնել

Աղոթել, աղոթողի կեցվածք ընդունել

«-Տե՛ր Աստված,- մրմնջում է պառավը և աչքերը բարձրացնում դեպի տան ծխից սևացած առաստաղը» (ԳՄ):

Աչքերը կկոցել, աչքերը կծկել, աչքերը կլորացնել

Ա. Զարմանալ

«Միհրանը մի բոպե կանգ առավ և կկոցած աչքերով նայեց արագ առաջացող փոշու գետնասող ամպին» (ԳՄ):

Բ. Լավ չտեսնել

«Նա վերցրեց հեռախոսը և աչքերը կծկելով ուզում էր կարդալ հաղորդագրությունը (անհ.):

«Մինա բիբին լարեց տեսողությունը: Նրա աչքերը ավելի կծկվեցին, փոքրացան, ձգվեց, որ լավ տեսնի եկողին» (ԱԲ):

Աչքով կանչել

«Աչքով կանչեց, որ հետևի իրեն՝ գլուխը մի թեթև կողքի թեքելով» (Ր):

Աչքերով մատնացույց անել

Աչքերով ցույց տալ կամ նշան անել ինչ-որ մեկի կամ ինչ-որ առարկայի:

«Երիտասարդը աչքերով ցույց տվեց անկյունում կանգնած կասկածելի մարդուն» (ԱԱ):

Աչքերով կախվել

Հարցում արտահայտել՝ « …քանի՞ օր Վանը կարող է դիմանալ,- հարցրեց Օհանես աղան և աչքերով կախվեց եղբոր դեմքից» (ԳՄ):

«Աչք» բառույթը՝ որպես հայացքի, նայվածքի դրսևորման ձև, իր

արտահայտությունն է գտել ոչ խոսքային միջոցների մեջ, դարձել իմաստային դաշտի անբաժանելի ենթադաշտ:

Խոսքերն ու մարմնի շարժումները սերտորեն են կապված միմյանց: Ոչ խոսքային միջոցների մեջ մեծ է աչքերի դերը. նրա գործառութային նշանակությունը ևս մեծ դեր ունի: Այսպես՝ ա) աչքերի ծայրերը մատներով ձգելը-շեղաչքի նկարագիր, բ) աչքերը փակել՝ ձեռքի ափը դեմքին-քնել է ուզում, գ) հոգնության նշան-մատներով տրորել աչքերը, դ) աչքը խաղալ (ձախը կամ աջը)-հաջողության կամ անհաջողության նախանշան են: Օրինակ՝ «Աջ աչքս խաղում է, ասում են՝ դա վատ նշան է» (Ն-Դ): Կամ՝ աչքը սառել, պաղել, շլել - «Աչքս շլում է, այսօր մեր տանից մարդ պիտի գա» (ՀԹ):

Այսպիսով, «աչք» հասկացույթի իմաստային դաշտը բազմաշերտ իմաստային կառույց է, որը հասկանալի է դառնում ինչպես լեզվաբանական ուսումնասիրության ժամանակ, այնպես էլ ոչ խոսքային հաղորդակցման ընթացքում: Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ իմաստային դաշտը հատուկ համակարգ է, որին բնորոշ է բարդ ու ինքնատիպ կառուցվածք: Իմաստային դաշտը ունի իր միջուկը՝ այն հասկացույթը, որը ընդհանրական նշանակություն է հաղորդում իր հետ փոխկապակցված բառամիավորներին:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ - Աշոտ Աղաբաբյան
ԱԲ - Ակսել Բակունց
ԱԻ - Ավետիք Իսահակյան
ԳՄ - Գուրգեն Մահարի
ԳԲ - Գրիգոր Բալասանյան
ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան
Եր.- Երուխան
ԷԱ -Էդվարդ Ավագյան
ՀԹ - Հովհաննես Թումանյան
Ն-Դ - Նար-Դոս
Շ - Շիրվանզադե
ՍԶ - Ստեփան Զորյան
ՎԹ - Վահրամ Թաթիկյան
Ր - Ռաֆֆի

Բանալի բառեր – *իմաստաբանական դաշտ, աչք, հասկացույթ, դաշտի միջուկ, տեսնելու ունակություն, հայացք, դարձվածք, ենթախմբեր, ոչ խոսքային հաղորդակցման միջոցներ, դիմախաղ*

АНАИТ АДИЛХАНЯН – ***Семантическое поле лексемы «глаз».*** **–** Семантическое поле – это совокупность лексических единиц, объединяющихся в ядро на основе семантических и функциональных признаков. Наша задача состоит в том, чтобы определить: 1) полевой подход, в центре которого выделено ядро – «глаз», 2) значения лексемы «глаз», отражённые в словарях, 3) фразеологические единицы, выражающие традиции нашего народа как носителя определённой культуры, 4) переносное значение лексемы «глаз», 5) несловесное значение лексемы «глаз» как средство коммуникации.

Ключевые слова: *семантическое поле, лексические единицы, ядро, лексема «глаза», полевой подход, фразеологические единицы, подсистемы, несловесное значение, средство коммуникации, взгляд*

ANAHIT ADIKHANYAN – ***The Semantic Field of the Concept "Eye"***. – The semantic field is a set of lexical units uniting into a core based on semantic and functional features. All lexical units join in each other in different kinds of semantic relations, which are formed in relation to its core-lexeme of the "eye".

Our task is to determine: 1) the field approach in the centre of which the nucleus (eyes) is given, 2) those meanings of the lexeme (eyes) that are reflected in the dictionary, 3) those phraseological units that express the tradition of our people as a carrier of a certain culture, 4) figurative meaning of the lexeme (eyes), 5) nonverbal meaning of the lexeme (eyes) as a means of communication.

Key words – *semantic field, eye, concept, lexical nucleus, ability to see, phrase, subsystems, non-verbal means of communication, facial expression*